community

The New Apostolic Church around the world

01/2015/AM

2015 թվականի նշանաբանը՝

Ուրախություն Քրիստոսով

Քննություն: Փոփոխություն: Նորացում : Ժամերգություն Լյուքսեմբուրգում

Դավանաբանություն : Հարցեր և պատասխաններ

New Apostolic Church
International

Համընդհանուր բոլորին

ՆԱԵ նախագահի

Սիրելի հավատաքի եղբայրներ և քույրեր ամբողջ աշխարհի, ինձ համար մեծ ուրախություն է Նորառաքելական եկեղեցու միջազգային համայնքային ամսագիրը ձեզ ներկայացնել կարողանալը: Այն կոչվում է „Community„ /„Միաբանություն„ /, որի առաջին համարը դուք հենց հիմա կարդում եք, և որը լույս է տեսնելու քառամսյակը մեկ և տպագրվելու է կամ էլեկտրոնային փոստով հասանելի է լինելու նորառաքելոց եկեղեցու բոլոր անդամներին:

Անգլիախոս վերնագրով „քըմյունիթի„ ամսագիրը եռածրագիր է:

- Հաղորդակցություն (անգլերեն՝ communication). Նոր համայնքային ամսագիրը պետք է օգնի կարևոր տեղեկությունները – լինեն դրանք ժամերգությունների, ուսմունքի, իրադարձությունների կամ եկեղեցու զարգացումների մասին- ձեզ, սիրելի հավատքի եղբայրներ և քույրեր, հնարավորինս բոլորիդ հասցնել:

- Միասնություն. (անգլերեն՝ unity). Մենք ունենք մեկ հավատ և մեկ նպատակ, դրա համար էլ կարևոր է , որ մենք ուսմունքի մեջ և առօրյա կենսաձևով, ինչպես մենք ժամերգության ժամանակ ենք լսում, հնարավորինս միանման լինենք: Այսպես մենք կուժեղացնենք միջազգային եկեղեցու հիմքը և կնպաստենք միասնությանը:

- Ընդհանրություն (անգլերեն՝ community). Մենք միջազգային մի ընդհանրություն ենքկազմում հասարակական և մշակութային շատ տարբերություններով հանդերձ: Խայտաբղետ համայնքային կյանքն ամբողջ աշխարհում պետք է այն բանին օժանդակի, որ մենք միմյանց ավելի լավ ճանաչենք և հասկանալ սովորենք: Այսպես պետք է միջազգային համայնքն էլ ավելի ուժեղ, քան մինչ հիմա էր, իրար մոտենա և սերտաճի :

Ձեզնից շատերը հավանաբար կկարոտեն իր լեզվառճով ծանոթ „Մեր ընտանիքը„ ամսագրին: Բայց մենք համոզվել ենք, որ այս ճանապարհով այլևս այնքան շատ հավատքի եղբայրների և քույրերի չենք հասել, ինչպես անցած տասնամյակնե-րում: Ուստի 2013թ. աշնանը Կանադայում շրջանային առաքյալների հավաքույթը մի նոր հաղորդակցության կոնցեպցիա որոշեց, որին է պատկանում „community„ համայնքային ամսագիրը, ինչպես նաև նորությունների էլեկտրոնային ամսագիրը nac.today էջով, որն ամեն օր նորառաքելոց աշխարհի նորություններն է ներկայաց-նում:

Թող որ այս նորամուծությունը՝ հավատարիմ տարվա նշանաբանին, այն է՝ ուրախություն Քիստոսով, ուժեղացնի և մեզ օգնի մեր միասնական նպատակին մի քիչ էլ մոտենալուն: Ես հույս ունեմ, որ դուք արդեն ոչ այնքան նոր տարին այս մտքով եք սկսել , և ցանկանում եմ ձեզ գալիք ամիսներին մեծ ուրախություն, հասունացում Քրիստոսով և Ամենաբարձրյալի օրհնանքը:

Ձեր Ժան – Լուք Շնայդեր

Քննություն: Փոփոխություն: Նորացում

Նկարները՝ Մարսել Ֆեդեի

Ժամերգություն Լյուքսեմբուրգում 2015թ. հունվարի 11- ին

Աստվածաշնչի խոսքը՝ Հռոմեացիներին 12:2

,,Եվ այս աշխարհի կերպարանքով մի կերպարանվեք,այլ նորոգվեցեք ձեր մտքի նորոգությամբ,որպեսզի դուք քննեք լավը, և թե ինչ է Աստծու կամքը՝ բարին և հաճելին և կատարյալը,,:

Սիրելի եղբայրներ և քույրեր, հարգելի հյուրեր, այստեղ և մեզ միացված համայնքներում: Ես ուրախ եմ, որ ես այսօր առաջին անգամ իմ եղբայրների և քույրերի հետ Լյուքսենբուրգում լինելու իրավունքն ունեմ , և որ մենք իրավունք ունենք մի քայլ էլ առաջ գնալ այս տարում, որը պետք է լինի Քրիստոսով ուրախության տարի: Ինձ արդեն շատերը տեղեկացրել են . ,,Ուրախության մացեք այս մտքին. մենք ուզում ենք այս տարի Քրիստոսով ուրախանալ: Եվ դա կարող ենք մենք անել: Նախ, որովհետև սիրելի Աստված մեզ միշտ գեղեցիկ նվերներ է տալու, որոնց համար մենք կարողանալու ենք ուրախանալ, անգամ, եթե դժվար օրեր լինեն, իսկ բոլորս էլ պետք է նկատի առնենք,որ յուրաքանչյուր ոք էլ դժվար օրեր է ունենում, դա վերաբերում է նաև այս տարվան, բայց, այնուամենայնիվ, մենք իրավունք ունենք ուրախանալու: Դա չի վերաբերելու զվարճանքին, գովքին ու փառաբանությանը, այլ զգալու ենք այն, որ Տեր Հիսուսը մեզ ամբողջովին մոտիկ է հենց փորձության ժամանակ: Իսկ դա մի առանձնահատուկ ուրախություն է, երբ նկատում ես, որ սիրելի Աստված քեզ շատ մոտ է:

Ուրախության առիթ մենք միշտ ունենում ենք- և լավ և ոչ այնքան լավ օրերին – Հիսուս Քրիստոսն ինքն է ասել . ,,…Այլ ուրախացեք, որ ձեր անունները գրված են երկնքում,,:/ Ղուկաս 10: 20 /Մենք երեկ երեխաների հետ խոսում էինք այն մասին, թե ինչ է երկինքը: Դա մի հետաքրքիր բանավեճ էր: Հիմա ես չէի ցանկանա դրան անդրադառնալ: Դուք կարող եք դրա շուրջ հետո էլ մտորել: ,,Ուրախացեք, որ ձեր անունները գրված են երկնքում,,: Ի՞նչ է դա նշանակում: Դա նշանակում է, որ Տեր Հիսուսը մեզ համար զոհաբերվել է , որ մենք կարողանանք Աստծո հետ միասնություն կազմել: Նա գնացել է մեզնից առաջ. ,, …և եթե գնամ և ձեզ համար էլ տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ կվերցնեմ ինձ մոտ, որպեսզի ուր ես լինեմ, դուք ևս այնտեղ լինեք,,: / Հովհաննես 14:3 / Ինչպե՞ս կարելի է սա պատկերացնել: Ես արդեն մի քանի անգամ երեխաներին ասել եմ , դա շատ պարզ է. որոշ միջոցառումների ժամանակ, օրինակ մի մեծ ժամերգության ժամանակ, նախօրոք ուղարկում են որևէ մեկին և ասում.,, Ինձ համար տեղ կպահես,,: Այդ մեկը կամ երգարան է դնում այդ նստատեղին, կամ պայուսակ կամ նմանատիպ մի իր, և երբ մեկ ուրիշը մոտենում է , նա ասում է , որ այդ տեղը զբաղված է , որ դա իր ընկերոջ տեղնէ : Այդպես ,նա տեղը ազատ պահում է , մինչ իր ընկերը կգա: Երբ նա գալիս է, ասում է.,, Սա քո տեղն է ,,: Այդպես է անում նաև Տեր Հիսուսը քեզ համար: Նա վերադառնում է Հոր մոտ , և ազատ տեղ է պահում քեզ և ինձ համար, և ասում.,, Այստեղը իմ եղբոր համար է, այստեղը իմ քրոջ համար է, սրանք նախատեսված են նրանց համար: Մեր անունները գրված են երկնքում, քանի որ Տեր Հիսուսը մեզնից յուրաքանչյուրի համար Աստծո հետ միասնություն կազմելու տեղ է նախատեսել: Եթե մենք դա ըմբռնում ենք, ապա առիթ ենք ունենում ուրախության:

> ,,Մեր անունները գրված են երկնքում, քանի որ Տեր Հիսուսը մեզնից յուրաքանչյուրի համար տեղ է նախապատրաստել Աստծո հետ միասնություն կազմելու համար,,:

Ես վաղուց ծանոթ, բայց ժամանակին համահունչ մի խոսք եմ կարդացել: Պողոսը գրում է հռոմեացիներին. , , Մի նմանվեք այս աշխարհին, այլ փոխվեք ձեր մտքի նորացմամբ…,, : , Աշխարհ , ասելով անմիջապես նկատի ունեն չարին, վատ մարդկանց և հնարավոր ամեն ինչը: Սակայն այստեղ խոսքը դրա մասին չէ: Այստեղ խոսքը գնում է ժամանակի մասին , ժամանակի ոգու մասին: Պողոսը դրանով ուզում է ասել, որ մենք մի կողմից ունենք Ամենակարող Աստծուն, որը երբեք չի փոխվում, Նա կարիք չունի փոխվելու, Նա կ ատարյալ է , Նա չի փոխվում նաև իրադարձության ճնշման ներքո, Նրա գործունեությունը ազդեցություն չի կրում այն ամենից, ինչ տեղի է ունենում երկրի վրա: Դա Աստվածն է .,, Ահա ես եմ ձեր Տեր Աստվածը և չեմ փոխվի,,: / Մաղաքիա :6 /

Մյուս կողմից էլ ունենք ժամանակի ոգու արտահայտումը նրանով,որ մարդկությունն անընդհատ փոխվում է: Թույլ տվեք երկու երևույթի անդրադառնալ. վերաբերմունքը Աստծո հանդեպ և վերաբերմունքը մերձավորի հանդեպ: Դրանք անընդհատ փոխվում են: Երբ որևէ մեկի գործերը լավ են, նա սիրելի Աստծո կարիքը չի զգում: Երբ գործերը վատանում են, նորից դառնում է դեպի Աստված. ,, Սիրելի Աստված , դու պետք է օգնես ,, : Երկրի վրա տեղի ունեցող իրադարձություններից և իրենց պահվածքից կախված՝ մարդկանց միջև հարաբերությունները միշտ փոխվում են: Մեկ բարի ու սիրալիր են լինում միմյանց հանդեպ, մեկ էլ՝ մերձավորը դառնում է ոխերիմ թշնամի : Սա մշտական փոփոխություն է : Աշխարհի իրադարձություններից կախված փոխվում է վերաբերմունքը Աստծո և մերձավորի հանդեպ, կարծիքները՝ ճշմարտության հանդեպ: Պողոսն ասում է .,, Մի նմանվեք այս աշխարհին, այլ ստուգեք , թե որն է Աստծո կամքը: Նա մեզ հորդորում է դառնալ դեպի Աստծուն , այլ խոսքով

Առաքյալ Յենս Լինդեմանը
/ Հեսսեն / Ռայնլանդ- Փֆալց / Սաարլանդ /
Իր խոսքի ժամանակ

ասած, չենթարկվել ժամանակի ոգուն և չփոխել մեր վերաբերմունքը Աստծո հանդեպ: Մերձավորի հանդեպ վերաբերմունքը ևս չպետք է կախված լինի աշխարհի իրադարձություններից: Մեր հարաբերությունների կենտրոնում պետք է լինի Ամենակարող Աստվածը: Մենք պետք է անսանք այն ամենին, ինչ Նա է ուզում, ինչ Նա է ասում, Նրա ճշմարտությանը, որը և մեր ճշմարտությունը պետք է լինի: Մենք չպետք է հենվենք բազմակարծության վրա: Եվ , եթե ամբողջ աշխարհը երևույթներն այլ կերպ է տեսնում, մենք ասենք.,, Մեզ ցավ է պատճառում: Մենք ապավինում ենք Աստծուն, Աստծո պատվիրանը չի փոխվում: Մենք չենք կարող մասնակից դառնալ,,: Անգամ, եթե մենք մի փոքր խումբ լինեինք, ի դեպ, այդպես չէ, մենք որպես քրիստոնյա, որպես հավատացյալ մարդիկ կապավինեինք Աստծուն: Չի կարելի ասել . բալց չէ որ բոլոր մարդիկ այդպես են անում , այդպես են ասում: Ոչ, Պողոսն ասում է , որ դուք ինքներդ ձեզ քննեք, քանի որ պատասխանատվությունը ձերն է : Աստծո և մերձավորի հանդեպ իմ հարաբերությունների համար ես եմ պատասխանատու: Իմ առաջադրանքն է , ստուգել, արդյոք դրանք համապատասխան են Աստծո կամքին:

,,Քննեք, թե որն է Աստծո կամքը… հատկապես՝ բարին, : Ի՞նչ է բարին: Պողոսն ասում է . բարին Աստծո օրենքն է, պատվիրանները, որը Աստված Մովսեսին է տվել / Հռոմեաց.7:12/ Աշխարհն գլխի վրա է կանգնած , թե՝ ոչ , դա մեր հարաբերությունների կենտրոնում է , դա միշտ վավերական է : Օրենքին է պատկանում նաև սիրո պատվիրանը .,, Դու պետք է սիրես քո Տեր Աստծուն,, և ,, դու պետք է սիրես քո մերձավորին , ինչպես քեզ ես սիրում,,: Հիսուսը շատ հասկանալի պարզաբանում է , թե ինչ է նշանակում մերձավորին սիրել, ինչպես ինքդ քեզ կսիրես: Նա ասել է .,, Այն ամենը, ինչ կուզեք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց,,: / Մատթեոս 7:12/ Ավելի պարզ բան չկա, դա վերաբերվում է բոլոր ժամանակներին և բոլոր հարաբերություններին, նաև այսօր, 2015 թվին, Եվրոպայում, Աֆրիկայում, Ամերիկայում: Մենք ինքներս պետք է միշտ մեզ ստուգենք. դեռ այդպես՞ է, դեռ ես այդպե՞ս եմ գործում, դեռ այդպե՞ս եմ մտածում: Ո՞րն է բարին: Բարին Աստծո օրենքն է , տասը պատվիրանները, Աստծո և մերձավորի հանդեպ սիրո պատվիրանը:

> ,,Աստծոն հաճելի չէ, երբ մենք մեր հավատը քարոզելու կամ պաշտպանելու համար վիրավորում ենք մերձավորին,,:

Ես հաճախ եմ այս դիպվածի մասին մտածել: Կա մեկը, ով Տիրոջը չի հետևում: Նա Տիրոջը որպես Աստծո Որդի չի տեսնում, բայց նա կամենում էր բարիք գործել, օգնում էր իր մերձավորին: Նա դուրս էր հանում դևերին, այսինքն, հրաշք էր կատարում: Ակնհայտորեն Աստված նրա հետ էր , և նրան որպես գործիք էր օգտագործում մյուսների

վերևում՝ խառը երգչախմբի երգչուհիները
ձախում՝ առաքյալ Ռուդոլֆ Քայնցը /Ավստրիա/ ծառայելիս

հանդեպ բարին գործելու համար, իսկ նա դեռ Հիսուսին չէր հետևում: Եվ Հիսուսն ասում էր. ամեն ինչ կարգին է :

Շատ մարդիկ կան այս երկրի վրա , որոնք մեր հավատը չեն ընդունում, նաև չեն հավատում Հիսուս Քրիստոսին, Աստծո որդուն: Սակայն ձգտում են մերձավորի հանդեպ բարի լինել և Աստծոն ծառայել: Աստված նրանց օգտագործում է որպես գործիքներ՝ բարին գործելու: Նրա համար հաճելի չէր լինի, եթե մենք նրանց չարժևորենք, նրանց արհամարհենք կամ անգամ հարձակվենք նրանց վրա: Սա իմ կողմից արված հայտնագործություն չէ, սա գալիս է Տիրոջ խոսքից:

Նման գնահատանքը չի փոխում մեր հավատքը: Մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսին, մենք գնում ենք այն ճանապարհով, որը մեր փրկության համար է գցված: Մենք հավատում ենք Քրիստոսի գալստյանը, մենք հավատում ենք առաքյալների ծառայությանը: Բայց դրա համար մենք չպետք է մյուսներին արհամարհենք, գիտակցելով, որ սիրելի Աստված կարող է նաև ուրիշ մարդանց հետ աշխատել, նրանց օգնել և նրանց օրհնել , և նրանք կարող են բարիք գործել: Աստծոն հաճելի է , երբ մենք նրանց հարգում ենք:

Մի ուրիշ անգամ էլ Հովհաննեսը , երբ տեսնում է ,

որ Հիսուսը Սամարիայում չի ընդունվում , ասում է., Տեր, կամենու՞մ ես, որ ասենք և երկնքից կրակ իջնի ու բնաջինջ անի նրանց,, : / Ղուկաս 9:54/ Սակայն Հիսուսը հանդիմանում է նրան: Դա ևս նրան հաճելի չէր: Նա չէր ուզում, որ մարդկանց ստիպեն ընդունել իրեն սպառնալով, որ հակառակ դեպքում երկնքից կրակ կթափվի:

Աստծուն հաճելի չէ, եթե մարդկանց ուզում են ուղղորդել՝ նրանց սպառնալով կամ վախեցնելով:Մենքպետքէսիրենք Աստծուն և մեր մերձավորներին: Այս պատվիրանը պետք է ճիշտ հասկանալ և կիրառել: Տեր Հիսուսն այն պարզաբանում է . մեր վերաբերմունքը Աստծո հանդեպ կախված է մերձավորի հանդեպ վերաբերմունքից: Դա մեկը մյուսից չպետք է բաժանել: Նա սա արզաբանել է այս խոսքերով.,, Եթե սեղանի վրա քո ընծան մատուցելու լինես և այնտեղ հիշես, թե քո եղբայրը քո դեմ մի ոխ ունի, քո ընծան թող սեղանի առաջ և գնա նախ հաշտվիր քո եղբոր հետ և ապա եկ քո ընծան մատուցիր,,:/ Մատթեոս 5:23,24/ Չեն կարող Աստծուն ծառայել, երբ արհամա,րհում են մերձավորին կամ թշնամանում նրա

աջում՝ գլխավոր առաքյալ Ժան – Լուք Շնայդերը եղբայրների և քույրերի հետ՝ ժամերգությունից հետո

ներքևում՝ ժամերգության ընթացքում երգում է խառը երգչախումբը

հետ: Աստծու հանդեպ սերը և մերձավորի հանդեպ սերը անբաժանելիորեն պատկանում են միմյանց:Հիսուսը մեզ բացատրել է, որ մենք չենք կարող ընտրել, թե ով է մեր մերձավորը: Դա ,իհարկե , արտակարգ կլիներ, որ ես որոշեմ, թե ում եմ սիրում. – Տերն է որոշում, թե ով է քո մերձավորը: Մերձավորը նա է, ով հիվանդ է , ով բանտում է – պատկերացրեք- և օտարը, ով բոլորովին այլ է, ով այլ մշակույթ ունի, այլ հավատ, այլ կարծիք: / Մատթեոս 25,35-45/ Նրան դու պետք է սիրես: Դու ինքդ չես կարող որոշել, թե ով է քո մերձավորը: Մերձավորը նա է, ում Աստված քո կողքին է դրել: Իսկապես, այնքան ժամանակ, ինչքան օտարը իր երկրում է , հեռու, սիրում են նրան: Բայց, հիմա , հավանաբար Աստված է որոշել. որ հիվանդը, աղքատը, պատժվածը քո կողքին, գյուղում կամ քո քաղաքում է ապրում: Աստված է կամեցել, որ նա է հիմա քո մերձավորը: Ուրեմն՝ խնդրեմ , քննիր, թե որն է հաճելի Աստծուն:

Տեսնում եք, որ մեր հավատը, նորառաքելական հավատը շատ կոնկրետ է : Այն շատ արագ է կիրառվում: Նա, ում Աստված մեր կողքին է դրել, նրան պետք է սիրենք: Հիսուսն էլ է պարզաբանել, որ մերձավորին ծառայելը չի կարող փոխարինել Աստծուն ծառայելուն: Երկուսն էլ պատկանում են միմյանց: Որոշ մարդիկ կարծում են , որ եթե մերձավորին ծառայում են, ապա կարիք չկա Աստծուն ծառայելու: Դա ճիշտ չէ: Դուք գիտեք, որ , երբ Մարիամը արժեքավոր յուղը բերեց և դրանով Տիրոջ ոտքերը օծեց, աշակերտներից մեկն ասաց.,, Ինչու՞ այդ յուղը չվաճառվեց երեք հարյուր արծաթ դահեկանի և չտրվեց աղքատներին,, : Հիսուսն ասաց.,, Թույլ տվեք նրան, որպեսզի իմ թաղման օրվա համար պահի այդ: Աղքատներին ամեն ժամ ձեզ հետ ունեք: Ինձ միշտ ձեզ հետ չունեք,,: / Հովհաննես 12, 1-8 / Մերձավորին ծառայելը չպետք է փոխարինի Աստծուն ծառայելուն: Երկուսն էլ պետք է անեն: Դա աստվածահաճո է;

,, Քննեք, թե որն է Աստծու կամքը…. Հատկապես՝ հաճելին,,: Աստված կատարյալ է , Նա կարիք չունի փոխվելու, համապատասխանեցվելու: Մենք կատարյալ չենք և պետք է միշտ մեզ քննենք, թե ինչը պետք է մեզ մոտ փոխվի, ոչ թե համապատասխանելու համար ժամանակի ոգուն, այլ՝ Աստվածային կատարելության չափանիշներին : Դրա համար էլ մենք պետք է միշտ գտնենք, թե որն է Աստծո կամքը, ինչ է ուզում Տեր Հիսուսը, որը կարևոր է և եկեղեցու համար, և յուրաքանչյուրի համար: Մենք պետք է հարմարվենք, մենք հանոզված ենք, , որ Աստված մեզնից առաջ է , գիտենք, որ այնքան էլ լավ չենք հասկանում Աստծո կամքը; այդպես էր նաև Պետրոսի մոտ: Նա կարծում էր, որ փրկություն կլինի Իսրայելին: Առաքելության առաջին հրահանգը հնչում էր համապատասխանորեն. գնացեք Իսրայելի երեխաների մոտ, ոչ թե՝ սամարացիների: / Մատթեոս 10;5/ Ապա Աստված ցույց է տալիս նրան, որ հետո պետք է գնա հեթանոսների մոտ: Նա պետք է իր կարծիքը փոխեր: Այդպես է նաև եկեղեցու պարագայում, պետք է անընդհատ քննենք, թե արդյոք մեր ուսմունքը համապատասխանում է Աստծո կամքին, թե կա փոփոխության կարիք : Եթե մենք գիտակցենք, որ , այո մենք Հիսուս Քրիստոսին ավելի լավ ենք հասկանում , ապա պետք է նախաձեռնեք փոփոխություններ, հարմարվենք,քանի ու մենք համոզվել ենք, որ ինչը մի անգամ քարոզվել է , այլևս չի համապատասխանում Աստծո կամքին; թեև այն սխալ չի եղել, բայց մենք հասկացել ենք. որ Աստծո կամքը շարունակում է առաջ գնալ: Դրան մենք՝ փոքր մարդիկս, պետք է հարմարվենք: Եվ ինչն արժեքավոր է եկեղեցու համար, արժեքավոր է և յուրաքանչյուրի համար:Մենք չենք կարող ավանդույթների վրա կանգնած մնալ և ասել. մենք միշտ այսպես ենք արել:Մենք պետք է մեզ միշտ հարց ուղղենք. ինչպես եմ ես վարվում Աստծո հանդեպ, մերձավորի հանդեպ: Ինչ կարող եմ ես փոխել, ինչ պետք է ես փոխեմ: Գուցե անհարմար է ինձ համար, դա հաճելի չէ ինձ, բայց անպայման անհրաժեշտ է:

Շատերի համար փոփոխությունները զայրույթի պատճառ են դառնում: Բայց հավատարիմների համար, ովքեր լուրջ են ընդունում, այդ փոփոխությունը,

հարմարվելը, հարցադրումները, մշտական ինքնաքննությունը մեծ ուրախության պատճառ և աղբյուր են: Շատ պարզ պատճառով, որ Տեր Հիսուսն ասում է .,, Դա ինձ դուր է գալիս: Ես օրհնում են քեզ,,:

Հիմնական մտքերը

Մեր հարաբերությունը Աստծո և մեր մերձավորների հանդեպ չպետք է ազդեցություն կրի իրադարձություններից և մեր շրջապատից: Մենք ուղղորդվում ենք Աստծո կամքով, ով մեզնից սպասում է

- որ մենք Աստծուն և մերձավորին սիրենք,
- որ ուրիշների հանդեպ հանդուրժող և հարգալից լինենք,
- որ մենք համաձայն լինենք մեզ կատարելագործելուն և կատարյալին ձգտելուն

Լուսանկարը՝ Օլիվեր Ոյութենի

Դավանաբանությունը հարցերում և պատասխաններում

„Մի եկեղեցի,որ մոռանում է իր ուսմունքը,դա մի թույլ եկեղեցի է“,-գլխավոր առաքյալի հնչեցրած այս արտահայտությունը Թուլուզի ժամերգությանը հասկանալի է դարձնում, թե որքան կարևոր է գլխավոր առաքյալի համար,որ բոլոր նորառաքելական քրիստոնյաները իմանան հավատի ուսմունքը:Նա ի սրտե խնդրեց իր հավատակից քույրերին ու եղբայրներին՝ ջանք չխնայել նորառաքելական եկեղեցու ուսմունքի բովանդակությունը ճանաչելու համար:

Միայն նա կարող է այդ ուսմունքը փոխանցել մեկ ուրիշին,ով ներքուստ յուրացրել է այն:Ընդ որում,բավական չէ միայն այն ճանաչելը,այլև դրանում պետք է համոզված լինել:Դրա հետ կապված նա մատնանշեց համառոտ լույս տեսած „նորառաքելական եկեղեցու կատեխիզմը հարցերում և պատասխաններում“-ը,որը մեր ուսմունքը հասկանալի կերպով նկարագրում է:2015թ.“Նորառաքելական եկեղեցու կատեխիզմը հարցերում և պատասխաններում“-ի նախատեսված հրատարակությամբ իր տրամադրության տակ ունի աշխատության երկու ձևեր,որոնք տարբեր պահանջներ են իրականացնում:2012թ.հիմնական լեզուներով կատեխիզմի հրատարակումից հետո շուտով արդեն դրան հետևեցին մի շարք թարգմանություններ:Հրատարակության հետ մեկտեղ կատեխիզմը պատրաստվեց նաև էլեկտրոնային ձևով:Բացի դրանից նախապատրաստվեցին խմբագրումները ինտերնետի համար:Ժամանակի ռիթմին համընթաց ստեղծվեցին կատեխիզմի սմարթֆոնային և

տաբելային տարբերակները:Բովանդակային առումով այս բոլոր հրապարակությունները բառացիորեն համընկնում են:Գլխավոր առաքյալ Վիլհելմ Լեբերը մի ցանկություն ուներ,որ ուսուցման նպատակների համար ևս կատեխիզմի մի միասնական խմբագրում մշակվեր:Սա պետք է ծառայեր այն բանին,որ մերձեցումը մասամբ դժվարին կապակցություններին հեշտացվեր:Այդ ցանկությունը այժմ բավարարում է այս երիտասարդ արտադրանքը՝կատեխիզմը հարցերում և պատասխաններում:Այս աշխատության կազմման համար կատեխիզմի վաղուց ձևակերպված տեքստերը բաժանվել են 750 հարցերի ու պատասխանների:Այս աշխատությունը իր մատչելի կազմվածքի միջոցով կարող է օգտագործվել սպասավորների համընդհանուր ուսուցման և եկեղեցական դասավանդումների ժամանակ:

Ինչու „հարցեր և պատասխաններ“

Հարցերի ու պատասխանների սխեմանքրիստոնեական կատեխիզմներում արդեն օգտագործված է դարեր ի վեր և մեր եկեղեցում ևս այն ունի հին ավանդույթներ:Վերը նշված մեթոդները բազմիցս փորձվել են :Դրանք կոնֆիրմանտների հետ զրույցում վաղուց կիրառվել են:Այսպիսով,“Նոր առաքելական եկեղեցու կատեխիզմը հարցերում և պատասխաններում“-ը հետագայում պետք է կիրառում գտներ որպես այդ զրույցները ուղեկցող ուսումնական ձեռնարկ:Այն բացի դրանից շատ լավ պիտանի եղավ քրիստոնեական ուսմունքը ընդհանրապես և մեր եկեղեցու սպեցիֆիկ ուսումնական արտահայտությունները ակնառու կերպով փոխանցելու համար:

Գլխավոր առաքյալ Լեբերի նախաձեռնությամբ „Նոր առաքելական եկեղեցու կատեխիզմը հարցերում և պատասխաններումը“-ը անցավ տեստավորման փուլ,որը այն խմբին,ում հանձնարարված էր նրա կազմումը,կարևոր ցուցում տվեց:Նախ երեք գլուխ օրինակի համար նախապատրաստվեցին հարցերի ու պատասխանների ձևով և կոնֆիրմանտների հետ զրույցի ժամանակ տեստավորում անցան:Տեստերն անցկացվեցին Աֆրիկայում,որտեղ եկեղեցու անդամների մեծ մասը տանն են:

Այս աշխատությունը կազմելու ժամանակ ամենից առաջ ուշադրություն դարձվեց ընթերցասիրության վրա:Այպիսով,տեքստը պարունակում է բազմաթիվ աստվածաշնչյան ամբողջական քաղվածքներ:Դրանք ընթերցողին առավելություն են տալիս,որ նա կարող է նաև աստվածաշնչյանքաղվածքներ կարդալ:

Այս հրատարակության էական նպատակներից մեկն էլ այն է, որ երաշխավորվի հասկանալիությունն ու կատարյալությունը: Դրան հասնելու համար կիրառվում են բազմաթիվ միջոցներ.

- Իրար հաջորդող հարցերն ու պատասխանները ընթերցողը ձեռքն է վերցնում բովանդակությանը հետևում:
- Որպեսզի ընթերցողը հեշտ ըմբռնի բարդ մասերը, այդ թեմաները բաժանված են առանձին բազմաթիվ հարցերի և պատասխանների : Այդպես իմաստային հատվածները կարողանում են համառոտ պահվել:
- Տեքստը հնարավորինս պարզ է ձևակերպվել՝ առանց մասնագիտական հասկացություններ կիրառելու:
- Խուսափվել է , այն համապատասխան մտքերի ընթացքը, որը տանում է դեպի ուսմունքի համապատասխան խոսքը, նվազագույն ներկայացնելը:
- Որոշակի հասկացություններ պարզաբանվել են կամ ՆԵԴ-ն համաձայն ընդարձակվել:

Ընտրված նկարները ընդհատում են բովանդակությունը: Կամ նրանք ընդգծում են տեքստերը, որոնց կողքին են դրված, կամ էլ ծառայում են ձևավորմանը: Տպված նկարները նաև գրավում են և նպաստում ընթերցանությանը:

Գլխավոր առաքյալ Ժան – Լուք Շնայդերը , ով եռանդուն հետևում է ՆԵԴ-ը հարցերով և պատասխաններով գրքի կայացմանը, աշխատության նախաբանում ընթերցողին է դառնում հետևյալ խոսքերով.

,,Ինչպես ՆԵԴ-ը, այնպես և դավանաբանության այս հրատարակումը կոչ է նորառաքելական քրիստոնյաներին՝ իրենց հավատի բովանդակությամբ զբաղվելու: Նաև բոլոր հետաքրքրվողներին հրավիրում է ծանոթանալ նորառաքելական հավատքի ուսմունքին: Թող որ այս գիրքը օրհնված կիրառմանը ծառայի,, :

Տպագրություն
Հրապարակագիր. Ժան – Լուք Շնայդեր
Իուբերլանսթրասե 243, CH – 8051 , Յուրիխ, Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆ ՓԲԸ հրատարակչություն
Գուելոյթսթրասե 298 , 60327 Մայնի Ֆրանկֆուրտ , Գերմանիա
Համակարգող՝ Պեթեր Յոհանինգ



Լուսանկարը՝ Օլիվեր Դյութենի

Գլուխ 1. Աստծո հայտնությունները

,, Նոր առաքելական եկեղեցու դավանաբանությունը հարցերով և պատասխաններով,, գիրքը կազմվել է մեթոդական – դիդակտիկ ձևով: Ընթերցողը 750 հարցերի և պատասխանների միջոցով՝ հեշտությամբ հասկանալով անցնում է խոսքից խոսք:

Որտե՞ղ է Աստծո հանդեպ հավատի սկզբնաղբյուրը:
Հավատի սկզբնաղբյուրը ինքն Աստվածն է : Նա իրեն ճանաչել է տալիս մարդկանց. Նա ,հայտնվում է, : Գիտակցությունը, որ Աստված կա, Աստված ինքն է մարդկանց նվիրել: Աստված չի թաքնվում , այլ թույլ է տալիս, որ մարդիկ ճանաչեն իրեն, այնպես, որ մարդիկ Աստծուց խոսեն և Աստծուն հավատալ կարողանան:

,, Ինչ որ կարելի է իմանալ Աստծու մասին, հայտնված է նրանց, քանզի Աստված ինքը հայտնեց այն նրանց. արդարև ի սկզբանե աշխարհի Աստծու աներևույթ հատկությունները, այն է՝ նրա մշտենջնավորությունը և զորությունը և աստվածությունը իմանալի կերպով տեսանելի են Նրա ստեղծածների մեջ, այնպես, որ ամենևին արդարանալ չեն կարող….,, : Հռոմեացիներին . 1: 19.20

Ինչպե՞ս է հայտնվում Աստված:
Աստված հայտնվում է տարբեր ձևերով. բնության մեջ և պատմության մեջ;

Ինչպե՞ս է Աստված հայտնվում բնության մեջ:
Բնության մեջ Աստված երևում է որպես Արարիչ՝ ստեղծողը տիեզերքի, մարդկանց, կենդանիների և բույսերի :

,,Նա ջուր պիտի խմեցնի լեռներին իր շտեմարաններից, նրա գործերի պտուղներով պիտի երկիրը լցվի: Մարդկանց կարիքների համար լեռներում խոտ աճեցրիր ու բանջար, և հողից հաց հանեցիր…,, Սաղմոսներ 104 : 13, 14

Որպես ի՞նչ է Աստված իրեն ճանաչել տալիս:
Աստված հոգևոր Արարած է , ոգի: Նա իրեն ճանաչել է տալիս որպես Աստված.

- Հայր ,Արարիչ և Արարչագործության պահապան / հմտ. Մովսես 1:1, Մովսես 8:21,22/
- Որդի, Փրկիչ և Բուժող / հմտ. Հովհաննես 5:20 /
- Սուրբ Հոգի, Մխիթարիչ, ով ողջ ճշմարտությամբ է ղեկավարում / հմտ. Հվհաննես 16:13/

Որտե՞ղ են ամրագրված Աստծո հայտնությունները:
Աստծո հայտնությունները ամրագրված են Սուրբ գրքում: Աստծո հայտնություն ասեով հասկանում ենք շատ բան.

- Աստված ճանաչել է տալիս իրեն: Նա պարզաբանություն է տալիս իր էության մասին:/ Աստծո , ինքնահայտնությունը,,:
- Աստված մարդկանց տեղեկացնում է իր կամքը:
- Աստված հանդիպում է մարդկանց իր սիրով, առավելապես իր խոսքով և հաղորդությամբ:

Կա՞ն ուրիշ վկայություններ աստվածային գործերի մասին:
Այո, Սուրբ Հոգու արարման միջոցով առաքյալների ծառայության մեջ ընծայվում են մարդկանց փրկության համար Աստծո գործունեության մասին իմացություններ և ճանաչողություններ: Աստվածաշնչում դրանք մատնանշվում են և Սուրբ Հոգու միջոցով բացահայտվում:

Ինչպե՞ս պետք է մարդը Աստծո հայտնության դեմ հանդիման իրեն պահի:
Մարդը պետք է Աստծուն և Նրա հայտնությանը հավատա: Միայն հավատի շնորհիվ մարդը կարող է աստվածային հայտնություններն ըմբռնել: Եթե նա հավատում է , Աստվածայինը նրա համար դառնում է արժեքավոր և վճռական իր կյանքի համար: Նա , ով Աստծուն որպես Արարիչ չի ընդունում, օրինակի համար, տիեզերքը չի համարում Աստծո գործ, որով Արարաիչն իրեն ճանաչել է տալիս, նա այն համարում է որպես բնության պատահական պրոցեսների արդյունք :

Ինչպե՞ս է մարդուն հաջողվում հավատալ:
Հավատը նվիրվում և ուժեղացվում է Սուրբ Հոգու միջոցով : Այն կատարվում է Սուրբ գիրքի հիման վրա Ավետարանի քարոզման միջոցով:

,,Ապա ուրեմն հավատը լսվածից է , և լսվածը՝ Քրիստոսի խոսքից ,, Հռոմեացիներին , 10:17

Ի՞նչ է Սուրբ գիրքը:
Սուրբ գիրքը – Աստվածաշունչը- Աստծո գործերի մասին գրվածքների ժողովածու է , խոստումներ և պատվիրաններ: Այն բաղկացած է Հին և Նոր կտակարաններից: Սուրբ գիրքը վկայություն էտալիս Աստծո հայտնությունների մասին, սակայն այն լիակատար և ամբողջական տեղեկություն չէ Աստծո բոլոր գործերի մասին: Աստված հոգացել է , որ պահպանված մնա այն , ինչը կարևոր է մարդկանց փրկության համար :

,,Աստվածաշունչ,, բառը ծագելէ լատիներեն , բիբլիա , բառից և նշանակում է գրքեր:

Ո՞վ է Սուրբ գրքի հեղինակը:
Սուրբ գրքի հեղինակը Աստված է : Մարդիկ, ովքեր ոգեշնչվել են Սուրբ Հոգով, գրի են առել այն, ինչ Աստված հայտնել է :Աստվածաշնչյան գրքերի ձևն ու արտահայտչականությունը գալիս է համապատասխան հրատարակիչներից և նրանց պատկերացումից , ինչպես նաև իրենց ժամանակների փորձից:

,,Ոգեշնչում,, նշանակում է ներշնչում: Աստվածային ոգեշնչումը նշանակում է , որ Սուրբ Հոգին մարդուն ինչ որ բան է ներշնչում, նրան ինչ որ բան է տեղեկացնում:

Աստվածաշնչյան գրքերի տեքստերը վստահելիորեն ե՞ն ավանդվում:
Այո, Աստված հոգացել է , որ աստվածաշնչյան գրքերի տեքստերը հարյուրամյակներ շարունակ չկեղծված մնան:

Ինչպե՞ս են կազմում աստվածաշնչյան գրքերի ծողովածուն:
Աստվածաշնչյան գրերի հավաքումը տեղի է ունենում հարյուրամյակների ընթացքում: Դրանք կատարվում են ոչ միայն մարդկային մտածելակերպի շնուհիվ, այլ՝ ամենից առաջ աստվածային կամքի շնորհիվ: Հին կտակարանի քրիստոնեական կանոնը հիմված է հրեականության եբրայական կանոնի վրա, որի գրերը գրեթե հազար տարվա ընթացքում են ստեղծվել:

Մի առաջնորդ դարձավ շրջանային առաքյալի օգնական

„Ամբողջ սրտով նոր առաքելական“,-այսպես է նկարագրում ուղեկիցը առաքյալ Ժոաո Միսսելոյին:Փետրվարի 22-ին գլխավոր առաքյալ Ժան-Լյուկ Շնայդերը նրան կարգեց որպես շրջանային առաքյալի օգնական Անգոլայի համար:Անցկացնենք մի փոքր արշավ ժամանակի ու երկրի միջով:

վերևում՝ առաքյալ Միսսելոյին ողջունում են համայնքի երեխաները

Այդ պատմական շրջագայության համար ամենահարմար զրուցակիցը շրջանային առաքյալ Արմին Բրինգմանն է:Նա արդեն հանգստի է անցել,բայց Ժոաո Ուանուկվե Միսսելոյին ոչ միայն նշանակել է իր բոլոր ծառայողական աստիճաններում սարկավագից/1985/ մինչև շրջանային ավագ/1994/,այլև ամենից առաջ նրա հետ նոր առաքելական եկեղեցին է կառուցել Անգոլայում:

Հաջորդական զարգացում

„Սկզբում կային միայն երկու հավատացյալներ“,-պատմում է հանգստի մեջ գտնվող շրջանային առաքյալ Արմին Բրինգմանը սկզբների մասին:“Եվ երեք տասնամյակ անց նոր առաքելական հավատին էր հարում ընդհուպ 250000 հոգի“:

Ոչ մի հրաշք.խոր հավատ ունեցող մարդիկ էին հանդիպել նոր առաքելական եկեղեցու ռահվիրաներին:Վերջապես Անգոլան հետադարձ հայացք նետեց քրիստոնեական ավանդույթների վրա:500 տարի առաջ Պորտուգալիան գաղութացրել և ավետարանականացրել էր արևմտաաֆրիկյան այդ երկիրը:Հետզհետե յուրաքանչյուր գյուղում առաջացան ոչ միայն եկեղեցիներ:Կաթոլիկ եկեղեցին կազմել էր նաև ուսումնակրթական համակարգ:

Նաև նոր առաքելական հավատն ընդունվեց գրկաբաց:Այսպես է հաղորդում շրջանային առաքյալ Արմին Բրինգմանը 1985թ.օգոստոսին դեպի Անգոլայի արևելք կատարած ճամփորդության մասին:“Երբ մենք հասանք մեր նպատակին,ժամերով ժամերգություններ

աջից՝ շրջանային առաքյալ Ռայներ Շտորկն է իր աշխատանքային
տարածքի՝ Հյուսիսհռենոսյան Վեստֆալիայի և Անգոլայի առաքյալների հետ

նկար.Նոր առաքելական եկեղեցի

էինք անցկացնում“:Գնալով ավելի շատ մարդիկ էին գալիս լսելու,մկրտվելու և կնքվելու“:

Վտանգներ ու արգելքներ

Դա մի ճամփորդություն էր լի արգելքներով.“Սահմաններն անցանելի չէին:Մինչև 2002թ.քաղաքացիական պատերազմն էր որոշում առօրյան“:Չնայած այդ քառասային պայմաններին այն ժամանակվա շրջանային ավետարանիչ Մանուել Էդուարդո Մբուտային հաջողվեց երկու ավիատոմս ճարել:Եվ ճանապարհը դեպի ապագա հավատակից քույրերն ու եղբայրները ազատ էր:

Բայց այդ ժամանակ ոչ միայն արկածախնդրային,այլև վտանգավոր ժամանակներ էին:Այդպիսով,այն ժամանակ դեռ առաքյալ Բրինգմանը և ևս չորս այլ ծառայակից եղբայրներ 1989թ. օգոստոսին երկրի հյուսիսում ենթարկվեցին խռովարարների հարձակմանը:Ընդ որում,Սուկամի Լանդու Ռոնսարդը՝ Անգոլայի առաջին տեղացի առաքյալը,այնքան ծանր էր վիրավորվել,որ չդիմացավ այդ վերքերին:

Անգոլան անում է հաջորդ քայլը

Այնուհանդերձ,այս ցավալի կորուստը կարող էր վիատեցնել սպասավորներին իրենց աշխատանքում:Համայնքների ու եկեղեցու անդամների թիվը մշտապես աճում էր:2005թ.Անգոլայում լրացուցիչ ղեկավարման մակարդակի կարիք կար:Այդ ժամանակվանից նոր առաքելական եկեղեցու աշխատանքները երկրի շրջաններում կոորդինացնում էին այսպես կոչված “Տեղական առաքյալների“՝ Մանուել Էդուարդո Մտումբան,Ժոաո Ուանուկվե Միսսելոն և Ալֆոնսո Ավելինոն:Այսօր ընդհանուր առմամբ 15 առաքյալ և 10 եպիսկոպոս են հոգ տանում նորառաքելական քրիստոնյաների համար ավելի քան 2200 համայնքներում:Աճը շարունակվում է:

Շրջանային առաքյալի օգնականի հանձնարարությունը

Այսպիսով,արդեն հաջորդ քայլի ժամանակն էր.փետրվարի 22-ին գլխավոր առաքյալ Ժան-Լյուկ Շնայդերը այցելեց մայրաքաղաք Լուանդա և Լուանդայի համար ձեռնադրեց մի շրջանային առաքյալի օգնականի:Միակ ճշմարիտ թեկնածուն այս առաջադրանքի համար դա առաքյալ Միսսելոն է,-ասաց այժմյան շրջանային առաքյալ Ռայներ Շտորկը:“Նա ծատ լավ պատկերացում ունի ամբողջ երկրի վերաբերյալ և նա շատ լավ հոգևոր խնամակալ է:Նրան է վիճակված հանդես գալու,իմանալով,սակայն,թե նա ինչ է ուզում“:

Նրա մտահորիզոնը կբավարարի այդ երկրի համար,լրացնում է Բրինգմանը.“Սովորեք անգլերեն“իր ժամանակին քաջալերել է նա Անգոլայի պորտուգալախոս եղբայրներին:“Միակը,ով դա արեց այդ ժամանակ,Ժոաո Ուանուկվե Միսսելոն էր“:Դա հնարավորություն տվեց նրան համագործակցելու Աֆրիկայի աշխատանքային խմբի և միջազգային աշխատանքային խմբերի հետ:

Անգոլայի աճող եկեղեցու համար շրջանային առաքյալի օգնականի ձեռնադրումը հաջողված որոշում էր՝ նշեց շրջանային առաքյալ Ռայներ Շտորկը:“Առաքյալ Միսսելոն դեռ 50 տարեկան էլ չկա,սա մի որոշում էր ապագայի համար:

Գլխավոր առաքյալ Ժան – Լուք Շնայդեր

Նկար ՆԱԵ Միջազգային

Գլխավոր առաքյալ Ժան – Լուք Շնայդեր

Համառոտ կենսագրական.

Ազգությամբ Ֆրանսիացի Ժան – Լուք Շնայդերը ծնվել է 1959 թ. սեպտեմբերի 18- ին Ստրասբուրգում / Ֆրանսիա / , և արդեն 1959թ. հոկտեմբերի 11-ին շրջանային առաքյալ Շրետեն Դոբերի միջոցով կնքվել է Սուրբ Հոգով: Քանի որ Ժան – Լուք Շնայդերի ծնողները եղել են նորառաքելական քրիստոնյաներ, ապա նա մանկական տարիներից դաստիարակվել է նորառաքելական հավատքով: Իր մանկությունն ու պատանեկությունը նա անց է կացրել իր ծնողների և երկու քույրերի հետ՝ Էլզասում / Ֆրանսիա / :

,,Մենեջմենթ,, մասնագիտությամբ բարձրագույն դպրոցն ավարտելուց և բանակում ծառայելուց հետո նա աշխատել է գազային ընկերություններից մեկում ՝ ղեկավարելով վաճառքի և հետո նաև ֆինանսական բաժինները:

1980թ. հունվարի 11-ին նա ձեռնադրվում է կրտսեր սարկավագ, 1985թ. հոկտեմբերի 24-ին ՝ քարոզիչ , 1989թ. սեպտեմբերի 17 – ին ՝ ավետարանիչ, 1993թ. հունվարի 1-ին ՝ հովիվ և 1993թ. նոյեմբերի 14-ին ՝ շրջանային ավագ: Նա հիմնադիրն է Հոհենհայմի / Էլզաս / համայնքի: 2003թ. հունիսի 22-ին գլխավոր առաքյալ Ռ. Ֆեհրը նրան ձեռնադրում է առաքյալ և ստանում է գլխավոր առաքյալի օգնականի ծառայությունը:

2004թ. սեպտեմբերի 26 –ից նա կատարում է շրջանային առաքյալի ծառայությունը, ղեկավարում է Ֆրասիայի մարզային եկեղեցին և հոգևոր առումով հոգ է տանում նաև մարզային այլ եկեղեցների համար, ինչպիսիք են ՝ Բուրունդին, Ֆրանսիական Պոլինեզիան, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության հարավ-արևելյան մասը, Նոր Կալեդոնիան:

2012թ. Հոգեգալստյան ժամերգության ժամանակ Քյոլնում / Գերմանիա / գլխավոր առաքյալ Վիլհելմ Լեբերը նրան նշանակում է գլխավոր առաքյալի օգնական ;

Ընդհանուր առմամբ, շրջանային առաքյալի գործունեության շրջանակը ընդգրկում է շուրջ 1,46 միլիոն այցելու, 9700 համայնք, 45 առաքյալ 45000 հոգևոր սպասավորներ:

Գլխավոր առաքյալի պաշտոնը Ժան –Լուք Շնայդերը ստանձնել է 2013թ. մայիսի 13-ին Համբուրգ քաղաքում / Գերմանիա/ անցկացվող Հոգեգալստյան ժամերգության ժամանակ: Իր խոսքով ասած, նրա ծրագիրն արտահայտված է ,, Նոր առաքելական եկեղեցու դավանաբանության,, առաջին էջում. ,, Նոր առաքելական եկեղեցին մի եկեղեցի է , որի գրկում մարդիկ իրենց լավ են զգում, և Սուրբ Հոգու արարումը և Աստծո հանդեպ սերը նրանց կյանքը կազմավորում է Հիսուս Քրիստոսի Ավետարանին համահունչ, նախապատրաստում է նրանց Նրա երկրորդ գաստյանը և հավերժական կյանքին,, :

Ժան – Լուք Շնայդերն ամուսնացած է , ունի երկու զավակ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԶԱՄԲԻԱՅՈՒՄ

nac.today

Լուսանկար. 2014 թ. Հոգեգալուստը Գերմանիայում

New Apostolic Church International